

Հաստատում եմ՝



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ/ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԻ ԳԾՈՎ

ՊՐՈՌԵԿՏՈՐ Է. Վ. ԱՍՐԻՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ԱՄԲԻՈՆԻ՝ 2025 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ  
ՆԻՍՏԻ ԹԻՎ 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՑ

### ԿԱՐԾԻՔ

**ԼՍԵՑԻՆ.** - Կարեն Մարատի Մանուչարյանի «Գուրգեն Խանջյանի ստեղծագործության թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները» ժ. 01. 02 («Նորագույն շրջանի հայ գրականություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին (ընդունված է ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի 2025 նոյեմբերի 6-ին տեղի ունեցած նիստում, արձանագրություն թիվ 3):

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** - պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Արզումանյանը, Լ. Սեյրանյանը:

Նշվեց, որ Կարեն Մարատի Մանուչարյանի «Գուրգեն Խանջյանի ստեղծագործության թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները» աշխատանքը կատարվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Պաշտպանությունը կայանալու է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում: Խորհուրդը այն կարծիքի է ուղարկել ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն՝ որպես առաջատար կազմակերպության:

Նշվեց, որ Գուրգեն Խանջյանի ստեղծագործությունը կարևոր տեղ է գրավում ժամանակակից հայ գրականության մեջ: Ավելի քան երեսուն տարի նա հրապարակում է պատմվածքներ, վեպեր, թատերգություններ, որոնք մշտապես եղել են ընթերցողների

և գրաքննադատների ուշադրության կենտրոնում: Դրանցից շատերը 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի մարդու էությունը և հայ իրականությունը բացահայտող բնութագրական էջեր են: Այս հիմնավորմամբ էլ արդարացվում է Կարեն Մանուչարյանի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Գուրգեն Խանջյանի ստեղծագործությանը նվիրված այս ատենախոսության վերնագիրն արդեն հուշում է, որ այն քննությունն է որոշակի թեքում-առանձնացումով՝ «ստեղծագործության թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները»: Կարևոր է հատկապես կառուցվածքային վերլուծությունը (գլուխ 3-րդ), որովհետև այն աշխատանքի ծանրակշիռ մասն է: Էական է նաև առաջին գլուխը՝ էքզիստենցիալիզմի, էքզիստենցիալ նշանների ցուցահանումները Խանջյանի երկերում (շուրջ 60 էջ): Աշխատանքը ոչ թե ինչի մասին է, այլ գլխավորապես՝ ինչպեսի: Մեկնության այս ընտրությունը բնավ էլ հակակշռություն չի ենթադրում: Պարզապես ընտրված է քննության այս դիտանկյունը, որ նույնպես ընդունելի է:

Ներածությունից, «Գուրգեն Խանջյանի ստեղծագործությունն էքզիստենցիալիզմի և կենսագրական իրողությունների շղթաներում», «Գուրգեն Խանջյանի ստեղծագործությունը սոցիալ-քաղաքական իրադարձությունների շղթայում. Գուրգեն Խանջյանը և ժամանակակից հայ արձակը», «Կառուցվածքաբանական հարցեր» վերնագրերով երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից բաղկացած ուսումնասիրությունը թեմայի քննաբանման գնահատելի փորձ է: Աշխատանքի արդիականությունն ու նորույթը հիմնավորված են մեթոդաբանական հարուստ գործիքակազմով, Գ. Խանջյանի ստեղծագործության՝ ընտրված հայեցակետի համեմատ հանգամանալի, բազմաչափ ու համակարգային քննության փաստով:

Աշխատանքի ներածության մեջ հեղինակը հստակ ու մանրամասն շարադրել է իր ընտրության եղանակն ու նպատակը և այն իրականացնելու իր առջև դրված խնդիրները, մեթոդներն ու մեթոդաբանական հիմքերը: Թե որքանով են դրանք համոզիչ դարձել աշխատանքի մեջ, որքանով են ամբողջանում և ճիշտ մեկնաբանում ու արժևորում Խանջյանի ստեղծագործությունը, գրողի տեղը արդի հայ արձակում, պարզվում է աշխատանքի ընթերցման ավարտին: Որպես ընդհանրական եզրակացություն՝ կարելի է ասել, որ Մանուչարյանը հասել է իր նպատակին: Ընտրված

մեթոդական հիմքերով դիտարկված կառուցվածքային, խորհրդանշային ու այլաբնույթ առանձնահատկությունները, որ առանձնացված են հատկապես աշխատանքի առաջին ու երրորդ գլուխների տարբեր ենթագլուխներում (էքզիստենցիալ նշաններ, բացակայող կերպար, պատկեր ազդանշան, տեքստը տեքստում և այլն), հաստատված են բազմազան համոզիչ օրինակներով և ընդհանրացումների հնարավորություն են տալիս: Մանուչարյանն արդի հայ գրողի վաստակը ներկայացնում և արժևորում է ժամանակի պատմամշակութային իրականության, ազգային գոյաբանական խնդիրների, հասարակական-քաղաքական տեղաշարժերի, գրապատմական միջավայրի, Խանջյանի կենսագրական իրողությունների լույսով: Նրա ստեղծագործության նկարագրով պայմանավորված միջգիտակարգային մոտեցումն ուշագրավ շեշտեր բացահայտելու հնարավորություն է տվել ատենախոսին:

Հետազոտության առանցքում մարդու խնդիրն է՝ գոյաբանական բարդ ճյուղավորումներով, որի խանջյանական մեկնությունն ըմբռնելու նպատակով Մանուչարյանն իրավացիորեն առանձնացնում է մենության, օտարման և մահվան թեմաները, փորձում պարզել սահմանային վիճակների և գոյաբանական տազնապների գեղարվեստական պատկերավորման նկարագիրը՝ Խանջյանի ստեղծագործությունը համարելով «ժամանակակից հայ գրականության մեջ էքզիստենցիալիզմի ամենաամբողջական դրսևորումներից» (էջ 14) մեկը: Ատենախոսի եզրահանգմամբ՝ հայ գրողի երկերի էքզիստենցիալիստական նկարագիրը բացառապես ստացական չէ. այն ձևավորվել է ոչ միայն եվրոպական իմաստասիրական և գրական ակունքների ներգործությամբ, այլև գրողի կենսափաստերի ներազդմամբ, որպես հետևանք նրա անձնական ճակատագրի ու հոգեկառույցի: Ի շարս խանջյանական արձակի էքզիստենցիալ նշանների՝ ատենախոսը հիշատակում է փակությունն ու անհատի երկատումը («ներսի»՝ բարդությամբ, օտարված էս-ի և «դրսի»՝ ազատամիտ, ազատական էս-ի հակադրությամբ), ազատության ձգտման ու ազատության պատրանքի, ընդվզման, անգործության և համակերպման հերթագայական շղթան, անկման և օտարման, ընթացքի և դադարի, նաև մահվան նշանները: Դրանք ներկայացվում են հույսի ու հուսահատության դրսևորումների, Բարձրյալի գոյության խնդրի հարակցումներով, կենսահայեցողության՝ «կաֆկայական» և «սարդյանական» հոռետեսական ու

լավատեսական հակադիր տարբերակների, իրականության և երազի տարակերպ եզրերի դիտարկումով, անդունդի, գնացքի, հիվանդանոցի, սարդի ու սարդոստայնի, պատի ու թունելի, շարժասանդուղքի, կախված ձիու և այլ պատկերային լուծումների մեկնաբանությամբ: Անհատականության կորստի խնդիրը դիտարկվում է կերպարանափոխության մոտիվի, հայելու և դիմակի խորհրդապատկերների քննության միջոցով: Որպես սահմանային վիճակներ ներկայացվում են պատերազմը, համավարակը, գերությունը և երկրաշարժը:

Գ. Խանջյանի ստեղծագործությունը քննության առարկա է դառնում նաև որպես անկախության տարիների հայ հասարակական-քաղաքական կյանքի բախտորոշ իրադարձությունների ինքնօրինակ արտացոլում՝ մեկնաբանվելով ժամանակի քննադատական գնահատականների նկատառումով, այլ հեղինակների գեղարվեստական որոշ նմուշների զուգահեռումով:

Հետևելով Ալգիրդաս-ժյուլիեն Գրեյմասի տեսական ըմբռնումներին՝ ատենախոսը խանջյանական գեղարվեստական իրագործումները հետազոտում է՝ կիրառելով լեզվաբանական կառույցների մոդելներ: Խանջյանի երկերը քննաբանվում են բացակայող կերպարի կառուցվածքային դերի գնահատման տեսանկյունից, ապա և պատկեր-ազդանշանների կառուցման սկզբունքներին հետևելով՝ առանձնացվում և վերլուծաբար ներկայացվում են ազդանշան-կանխագրումները և ազդանշան-բացահայտումները Խանջյանի երկերում: Հաջորդիվ ուսումնասիրվում են հայեցակետի կենտրոնացման եղանակները, իսկ վերջում՝ «տեքստը տեքստում» կառույցը՝ համասեռ և անհամասեռ համակցությունների առանձնացմամբ: Որպես համասեռ կառույցի օրինակ՝ դիտարկվում է «բեմ բեմի մեջ» հնարքը, անհամասեռ համակցությունների խանջյանական նմուշներ են «էկրանը բեմում», «բեմը վեպում», «նկարը վեպում», «երաժշտությունը վեպում», «կինոֆիլմը վեպում» կառույցները: Ուսումնասիրության այս հատվածում ուշագրավ է ջազի ու ռոքի հակադրությունը՝ որպես ներսի ու դրսի բախման երաժշտական արտահայտություն:

Եզրակացությունները տեքստի տրամաբանությունից բխող սեղմ ու բովանդակալից ընդհանրացումներ են:

Ատենախոսը քաջատեղյակ է Գ. Խանջյանի ստեղծագործությանը: Մեթոդական արդյունավետ համակցմամբ մանրակրկիտ հետազոտելով արդի հայ հեղինակի

ստեղծագործության թեմատիկ ու կառուցվածքային առանձնահատկությունները՝ նա ընդհանուր հիմնագծերով ամբողջացնում է պատկերը, լուծում իր առջև դրված խնդիրները: Գնահատելի են նաև որպես մեթոդական հիմքեր անհրաժեշտ տեսական գրականության որոնումն ու ընտրությունը տարբեր գիտաճյուղերի նշանավոր դեմքերի աշխատություններից, որոնք նշված են օգտագործած գրականության ցանկում: Ուշադրություն են գրավում նաև ժամանակակից արձակագիրների գործերի զուգահեռումները, նրանց չստորադասելը «իր» հեղինակին, արդի արձակի համապատկերը տալու միտումը ատենախոսության երկրորդ գլխում («Գուրգեն Խանջյանը և ժամանակակից հայ արձակը» ենթագլուխը):

Ամփոփելով դիտարկումները՝ ելույթ ունեցողները նշեցին, որ ատենախոսության հեղինակ Կարեն Մանուչարյանը գիտական ճիշտ չափանիշներով է ստեղծել իր աշխատանքը, որը համապատասխանում է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման պահանջներին:

Ընդհանրության մեջ հաջողված աշխատանքում, սակայն, տեղ են գտել նաև որոշ թերություններ ու վրիպումներ, որոնց շտկման դեպքում այն կդառնա ավելի ամբողջական.

1. Ատենախոսության հեղինակը լավ ծանոթ է Խանջյանի ստեղծագործությանը նվիրված գրաքննադատական աշխատանքներին, որոնք նշվում են թե՛ շարադրանքում, թե՛ օգտագործած գրականության ցանկում: Այդ առումով զարմանք է հարուցում ատենախոսության հենց սկզբում՝ ներածության 3-րդ էջում տեղ գտած հետևյալ միտքը. «Արդի գրականության համապատկերը ներկայացնելու փորձեր կատարվում են դեռևս 2000-ականների սկզբից»: Սա սխալ է, քանի որ արդի հայ գրականության և նրա մաս կազմող Գուրգեն Խանջյանի երկերի գրաքննադատական գիտակցումը սկսվել է 1990-ական թթ. կեսերին: 1995 թ. լույս են տեսել Ազատ Եղիազարյանի «Շարժասանդուղքը տանում է դեպի դատարկություն» դիմանկարը («Գարուն», 1995, թիվ 9) և Գրիգոր Հակոբյանի «Անտիուտոպիայից դեպի ոչնչապատմում» գրախոսությունը Գուրգեն Խանջյանի «Հիվանդանոց» վեպի մասին («Գրական թերթ», 1995, թիվ 9): 1996 թ. «Գրական թերթում» (թ.թ. 6-8) տպագրվել է Սեյրան Գրիգորյանի «Գրական մամուլ, 1995» տարեկան տեսությունը, որտեղ Խանջյանի ստեղծագործությունը վերլուծվում է հենց արդի հայ գրականության

համապատկերում: Այս հոդվածները օգտագործելու և գրականության ցանկում նշելու պարագայում Մանուշարյանը կտեսներ, որ իրականում արդի գրականության համապատկերը, ինչպես նաև Գուրգեն Խանջյանի ստեղծագործությունը ներկայացնելու փորձերը սկսել են կատարվել ոչ թե 2000-ականների սկզբից, այլ 1990-ականների կեսերից:

2. Առկա են նաև վերլուծական բնույթի բացթողումներ: Երրորդ գլուխը, որը Մանուշարյանն իրավացիորեն անվանել է «Կառուցվածքաբանական հարցեր», ծավալման անուրանալի հնարավորություններ է տալիս: Իսկապես, դիտարկված են կառուցվածքաբանական մի քանի հարցեր: Հետաքրքիր կլինեին խանջյանական խորհրդապատկերային միավորները նշանային մեծ համակարգում դիտարկելը, փակության նշանների միկրոհամակարգը այլ թեմաների և մոտիվների նշանային միկրոհամակարգերի զուգահեռներում քննելը և վերջնական ինտեգրման արդյունքը՝ մակրոհամակարգն արտածելը: Դա կլինեի հիրավի ամբողջական կառուցվածքաբանական, կառուցվածքային-նշանագիտական ուսումնասիրություն:

3. Գուրգեն Խանջյանի ստեղծագործությունը վստահաբար դիտարկելի է նաև հետմոդեռնիզմի գաղափարագեղագիտական համակարգի լույսով, որի կայուն հայտանիշներն են տարածաժամանակային փակուղին, հուսահատ ձանձրույթը, մարդկային ձգտումների անհեռանկարայնության գիտակցությունը, ոչ նորմատիվ բառապաշարի դրսևորումները, արժեքանական կողմնորոշիչների հեղհեղուկ նկարագիրը, «վեհ արժեքների միտումնավոր մանրացում, պարզունակացում»-ը (էջ 93), «նոր սերնդի ամենամերժությունը» (էջ 156), միջտեքստայնությունը և կոլաժայնությունը և այլն: Ատենախոսը նկատում է այս հայտանիշների մեծ մասը: Սակայն հարկ էր նույնականացնել դրանք իբրև հետմոդեռնիզմի գաղափարագեղագիտական համակարգի դրսևորումներ:

4. Առաջին և երկրորդ գլուխների վերնագրերում «շղթաներում» կամ «շղթայում» արտահայտությունները տեղին չեն օգտագործված: Գրական ստեղծագործությունը ո՛չ գրական ուղղության կամ մեթոդի և ո՛չ էլ կենսագրական իրողությունների կամ սոցիալ-քաղաքական իրադարձությունների կողմից շղթայված կամ շղթաների մեջ լինել չի կարող: Էքզիստենցիալիզմի կամ գրական այլ մեթոդի հուշումներով կարող է ուղղորդվել, ազդվել, նմանակել, բայց ոչ շղթայվել, կենսագրական իրողություններով

պայմանավորվել, Բայց ոչ շղթայում լինել, կարող է դրանց արտացոլումը, արձագանքը լինել, ինչպես շատ ճիշտ ասված է աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթավերնագրում՝ «Անկախության տարիների հայ հասարակական կյանքի բախտորոշ իրադարձությունների գրական արձագանքները»: Մի գրողի ստեղծագործությունը կարող է գրական ընթացքի շղթայի մի օղակը լինել, եթե արժեքավոր է, կամ հարստացնել, ամրակայել որևէ օղակ:

5. Լեզվական առումով բավական հստակ և գիտական այս աշխատանքում երբեմն տեղ են գտել ոչ ճշգրիտ կամ անորոշ առանձին ձևակերպումներ.

Ա) «Ներածության» մեջ Մանուշարյանը գրում է, թե «ատենախոսության օբյեկտը Խանջյանի գեղարվեստական ժառանգությունն է, առարկան՝ նրա երկերի թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունների ամբողջությունը» (էջ 6): Եթե այստեղ օբյեկտի ու առարկայի տարբերությունը իբրև թե ընդհանուրի ու մասնավորի իմաստով է արդարացված, ապա հետաքրքիր է, թե ինչու է սեղմագրի մեջ հակառակը նշված («Ատենախոսության առարկան Գ. Խանջյանի գեղարվեստական ժառանգությունն է»), իսկ օբյեկտի մասին ոչինչ ասված չէ: Եվ եթե նույնը չեն օբյեկտն ու առարկան, ապա ինչպես է թարգմանվում օբյեկտը:

Բ) Խանջյանին և ընդհանրապես արձակին նվիրված այս աշխատանքում ինչո՞ւ է հանկարծ հայտնվում չորս տող պոեզիայի մասին՝ հիշելով միայն արցախյան թեման ու Խաչիկ Մանուկյանի մեկ բանաստեղծությունը (էջ 89): Բայց ինչո՞ւ միայն այդ թեման ու ինչո՞ւ միայն նա: Նույն էջում խոսվում է այդ շրջանում գրված երեք գործի մասին, որոնց մեջ պատկերված է փառասեր և եսասեր առաջնորդի տիպը: Նախ՝ Էլֆրիկ Զոհրաբյանի «Ամոթի գույնը» հեքիաթի, ապա՝ Խանջյանի երկու պիեսների: Թերևս դրանք պետք է ներկայացվեին հակառակ հաջորդականությամբ (քննության առարկան Խանջյանի ստեղծագործությունն է), և հեքիաթը ոչ այդպիսի մանրամասնությամբ, հինգ մեջբերումներով, երբ այլ էջերում ուրիշ հայտնի հեղինակների մասին երբեմն միայն ժլատ նշումներ են: Վատ չէր լինի այստեղ հիշատակել նաև Վահագն Գրիգորյանի՝ հենց նույն շրջանում (2006 թ.) լույս տեսած «Առաջնորդի կյանքն ու մահը» շատ հետաքրքիր վեպը:

Գ) Որոշ էջերում Խանջյանի երկերի կամ կերպարների ընդհանուր բնութագրեր են տրվում առանց անունների հիշատակման: Ասենք՝ «Խանջյանի կերպարները....

գերծ չեն ընդվզումից» (ո՞ր կերպարները) , «Խանջյանի երկերում.... ներկայացվում են.... ( ո՞ր երկերում) » (էջ 24):

«Օգտագործած գրականության ցանկ»-ում կարելի էր դասակարգված առանձնացնել քննարկվող բնագրերը, տեսական գրքերը, մամուլը:

Դ) Շատ դեպքերում ատենախոսը կատարում է անհրաժեշտ վերացարկումներ, սակայն երբեմն թվում է՝ բծախնդիր մանրադիտարկումներն ու զննումներն ինքնանպատակ են (էջ 103-106):

Նշվեց, սակայն, որ նկատված թերությունները չեն ստվերում աշխատանքի առավելությունները: Գնահատելի է նաև աշխատանքի շարադրանքի կերպը՝ պարզ, հստակ, հետևողական: Պաշտպանության է ներկայացված գնահատման արժանի հեղինակին նվիրված ծավալուն և ամբողջական մի ուսումնասիրություն, որ ընդհանրության մեջ գնահատելի ատենախոսություն է և արժանի է բարձր գնահատականի:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Կարեն Մարատի Մանուչարյանի «Գուրգեն Խանջյանի ստեղծագործության թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները» ուսումնասիրությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, ուստի և այն կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**Հայ նորագույն գրականության պատմության  
և գրաքննադատության ամբիոնի վարիչ՝**



**Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ**




**Նիստի քարտուղար՝**



**Ն. ԻՍԱՀԱԿՅԱՆ**

**Ամբիոնի վարիչի ստորագրությունը**

**Խառնատում են՝**



**ԵՊՀ գիտքարտուղար Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՉԴ. 11. 25թ.